Հայաստանի Հանրապետության
Հանրային խորհրդի նախագահ
պարոն Ս. Սաֆարյան

ՀՀ քաղաքացի Մուշեղ Հովսեփյանից

[redacted]

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պրն Սաֆարյան,

Համաձայն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. Հանրային խորհուրդը 2020 թվականին սեպտեմբերի 27-ից սանձազերված պատերազմի՝ երկրի տնտեսական, ժողովրդագրական և սոցիալական իրավիճակի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ իրականացրե՞լ է վերլուծություններ և տվե՞լ է եզրակացություններ: Խնդրում եմ պատասխան գրությանը կցել հրապարակման ենթակա վերլուծությունները և եզրակացությունները:
2. Ս.թ. նոյեմբերի 10-ից հետո ի՞նչ գործողություններ են ձեռնարկվել սոցիալական երկխոսությանն աջակցելու համար:
3. Ս.թ. նոյեմբերի 10-ից հետո քանի՞ խորհրդակցություն և քննարկում է կազմակերպվել: Խորհրդակցությունների և քննարկումների արդյունքների մասին տեղեկացե՞լ է ՀՀ վարչապետը:

4. Ս.թ. նոյեմբերի 10-ից Հանրային խորհուրդը քանի՞ գրություն (եզրակացություն, առաջարկ) է ուղղել ՀՀ վարչապետին ստեղծված իրադրության վերաբերյալ:

5. Հանրային խորհուրդը քննարկե՞լ է ժամանակավոր հանձնաժողով կամ աշխատանքային խումբ ձևավորելու հարցը:

6. Հանրային խորհրդի նախագահը ստացե՞լ է գրավոր առաջարկություններ կամ դիմումներ հանրային խորհրդի անդամներից: Եթե այո, ապա խնդրում եմ մանրամասնել:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ՝

[redacted]

Մուշեղ Հովսեփյան
16.11.2020